

ՔԱՂՈՒԱԾՔ ԶՕՐԱԳՐՈՒԹՆԱՆՅ ՍԻՆՈԳԻՒ.

Ի 6-ն Հոկտեմ: Նորին Աւհագաւորութիւն զիջանելով ի խնդիրս Հայ Հասարակութեան Ախալցխայ քաղաքի՝ բարեհաճեցաւ հրամայել Սրբազան Սինօգին, հրամանագրել վիճակային Ատենին Արաստանի արձակել յապաշխարանացն զձերունի Յովհաննէս քահանայն Յարոյեան նոյն քաղաքացի, որ ենթարկեալ էր ընդ ապաշխարութեամբ երկամեայ ժամանակաւ, վասն տալոյն ոմանց ղխարդախ վկայականս ծննդեան՝ և թոյլատրել ի քահանայագործութիւն. ներելով նմա ի պատճառս խորին ծերութեան:

Ի 3-ն Նոյեմ: Ըստ արձանագրութեան Անդամոյ Հոգեւոր Կառավարութեան Ախալցխայի, Արրահամ քահանայի Աղաղղեան՝ անյայտացեալ են ի բաժանորդական թղթոցն Արարատ ամսագրի 1876 ամի, մասնաւոր թուղթք ապառկաց, ի յանձնելն Խորէն աւագ քահանայի Բարսեղեանց Ախալքալակայ, Յովհաննէս քահանային Քաջաղնունոյ զգործսն գործակալութեան, որով մնան յանյայտութեան գինք 63 օրինակ Արարատայ, ոյր վասըն Սրբազան Սինօգն հրամայեաց վիճակային Ատենին Արաստանի պահանջել ի նոյն քահանայիցն երկոցունց զգինս կորուսեալ 63 օրինակ Արարատայ զ252 բուրլիս արձաթոյ, ի խրատ և ի զգուշութիւն նոցա և այլոց գործակարաց:

Ե 8-ն Նոյեմ: Սրբազան Սինօգն հրամանագրեաց վիճակային Ատենին Արաստանի, ըստ պահանջելոյ քաղաքական իշխանութեան առնուլ զհարգ քահանայութեան Առաքել քահանայի Ազիզեանց, որ պարտէ արքորիլ ի Սիրիւիս վասն տալոյն զկեղծ վկայական խարդախ ազգաբանութեան Գրիգորի Մեղրոնեան Հուշաբաղաբացոյ:

Ի 29-ն Նոյեմ: զՄիքայէլ քահանայն Համկաքարակ գեղջ վիճակին Կարուց, վասն պատկելոյն զանչափահաս թոռնն իւր զԱբելն տասնամեայ, ընդ տասն և ութն ամեայ օրիորդի, Սինօգն որոյ Էջմիածնի հրամայեաց զազարեցուցանել զնա ի քահանայագործութենէ, որ և ունի մնալ ի պատժին մինչև ցհասանիլ թոռան նորա Աբելի ցարրունս հասակին լւրոյ և ցընտրողութիւն նորա զամուսնութենէն իւրմէ: